

## Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջախը Վարդենիսում էր

09.06.2015

Հունիսի 6-ին Վարդենիս քաղաքը տոնական տրամադրության մեջ էր: Ուրախ երգ ու պարի, ծափողջույնների ներքո տեղի ունեցավ Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջախի դիմավորման արարողությունը: Վարդենիսը՝ Արցախի հանրապետության Քարվաճառի շրջանից հետո հաջորդ կանգառն էր, որտեղով ճանապարհվեց օլիմպիական կրակը: Արարողությունը ներկա էին Գեղարքունիքի մարզի ղեկավար այրերը, պաշտոնատար այլ անձինք, քաղաքի եւ հարակից համայնքների բնակիչներ: Բարի երթ մաղթելով դեպի համահայկական 6-րդ խաղեր՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն իր ելույթում նշեց. «1999 թվականից սկիզբ առած եւ շարունակվող Համահայկական խաղերն այսօր առավել հավակնոտ նպատակներ են դնում համայն հայության առջեւ՝ ազգահավաքման, հայոց պետականության շուրջ համախմբվելու, հայոց հայրենիքը վերակերտելու եւ հզորացնելու գերագույն նպատակներ: Այն, որ տարեցտարի Համահայկական խաղերը դառնում են ավելի ընդգրկուն, ավելի բազմաբովանդակ, խոսում է այն մասին, որ հեռու չէ Համահայկական իղձերի իրականացման օրը, որ մենք գտել ենք հայ ժողովրդի միաբանության հաստատման ճանապարհներից մեկը: Շնորհավորում եմ բոլորիս Համահայկական խաղերի բացման առթիվ, մաղթում խաղաղ երկինք, տոնական տրամադրություն, հաղթանակի սպասումներով ու բերկրանքով լի օրեր, մարզական ու անձնական նվաճումներ,»: Վարդենիս քաղաքում ամառային 6-րդ խաղերի մեկնարկի առթիվ տեղի ունեցած հանդիսավոր արարողությունից հետո ջախակիրները եւ պատանի մարզիկները ուղեւորվեցին Տաուշի մարզ: Իսկ տոնակատարությունը Վարդենիսում շարունակվեց: Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջախի վառման մեկնարկի հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Մայիսի 9-ին, Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու խորանում՝ Արցախի թեմի առաջնորդ, Արքեպիսկոպոս Պարգեւ Սրբազանի հաղիսապետությամբ, մեծ տոնակատարությամբ: Նշենք, որ Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջախի վառման պաշտոնական արարողությունը լինելու է հատուկ տոնակատարություն: Ջախը կանցնի հայաշատ մի շարք քաղաքներով եւ օգոստոսի 2-ին կհասնի մայրաքաղաք Երեւան՝ ազդարարելով՝ Համահայկական ամառային 6-րդ խաղերի մեկնարկը: